Հայաստանի դիմակայունության և աճի ծրագիր

2024թ. ապրիլ

ԵՄ-ն և Հայաստանը ներկայացնում են իրենց տեսլականը նոր, հավակնոտ Գործընկերության օրակարգի շրջանակում:

Ի աջակցություն այդ գործընկերության՝ ԵՄ-ն ներկայացնում է **Հայաստանի 2024-2027 թթ. դիմակայունության և աճի ծրագիրը՝ 270 միլիոն եվրո բյուջեով:**

200 միլիոն եվրո դրամաշնորհային օժանդակություն

70 միլիոն եվրո դրամաշնորհային ֆինանսավորում՝ կապի, դիմակայունության և բիզնեսի զարգացման ոլորտներում **ներդրումները խթանելու համար**

Դիմակայունության եւ աճի ծրագիրը կենտրոնանալու է հետեւյալ առաջնահերթությունների վրա.

Հայ հասարակության դիմակայունության բարձրացում

- **Ժողովրդավարական բարեփոխումներին, մարդու իրավունքներին և օրենքի գերակայությանն** ուղղված աջակցության շարունակություն:
- Աջակցություն **հմտությունների և զբաղվածության ոլորտում բարեփոխումներին** և ներդրումներին:
- Աջակցություն **տեղահանված անձանց երկարաժամկետ ինտեգրմանը՝** ներառյալ բնակարանային և զբաղվածության ապահովման հարցերում՝ միջազգային գործընկերների հետ միասին:

Կապի և գործարարության ուղղությամբ ներդրումների իրականացում

- Աջակցություն Հայաստանի **էներգետիկ դիվերսիֆիկացմանը և անվտանգությանը՝** վերականգնվող էներգիայի ոլորտում ներդրումների ավելացման և Վրաստանի հետ հաղորդման ցանցի հզորացման միջոցով:
- **Տրանսպորտային ենթակառուցվածքներում** ներդրումների մոբիլիզացում՝ զարգացնելու Հայաստանի՝ որպես տարածաշրջանային լոգիստիկ և տրանսպորտային հանգույցի դերը:
- **Գործարարության զարգացման** ուղղությամբ ներդրումների իրականացում՝ ուղղված նոր շուկաներ մուտք գործել ձգտող տեխնոլոգիական ընկերություններին, ստարտափներին և ՓՄՁ-ներին:
- Տնտեսական և ներդրումային ծրագրի շրջանակներում կապի ոլորտում ներդրումների մոբիլիզացում և աջակցություն Հայաստանի մասնակցությանը տարածաշրջանային նախագծերին, մասնավորապես՝ **Սևծովյան էլեկտրահաղորդակցման մալուխին:**

Հայաստանի մերձեցում Եվրոպայի հետ

- **Օգնություն վարչական մարմինների ու հաստատությունների հզորացմանը** և աջակցություն իրավանորմատիվային պահանջների համապատասխանեցմանը՝ փորձագետների և տեխնիկական աջակցության միջոցով (ԹԱՅԵՔՍ, Թվինինգ):
- Աջակցություն **ավիացիոն և միջուկային անվտանգությանը**:
- Աջակցություն Հայաստանի **արտահանման դիվերսիֆիկացմանը** և նոր շուկաներում հայկական արտադրանքի առաջմղմանը:

© Եվրոպական միություն, 2024
Սույն փաստաթղթի վերաօգտագործումը թույլատրվում է՝ համապատասխան աղբյուրի վկայակոչման և կատարված բոլոր փոփոխությունները նշելու պայմանով (Creative Commons հեղինակության վերագրման 4.0 Միջազգային արտոնագիր): ԵՄ-ին չպատկանող տարրերի ցանկացած տեսակի օգտագործման կամ վերարտադրության համար հնարավոր է անհրաժեշտ լինի թույլտվության համար դիմել անմիջապես համապատասխան իրավատիրոջը: Բոլոր պատկերների հեղինակային իրավունքը պատկանում է Եվրոպական միությանը, եթե այլ բան նշված չէ:

Լյուքսեմբուրգ: Եվրոպական միության հրատարակչական գրասենյակ, 2024

Print ISBN 978-92-68-13921-9 doi:10.2775/936198 NA-02-24-413-EN-C
PDF ISBN 978-92-68-13909-7 doi:10.2775/739442 NA-02-24-413-EN-N